



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 12 » 10 2020 թ.

№ 80-Ա

ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՅՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 60-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի թիվ 272-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 1-ին կետի դրույթներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Վիճակագրական կոմիտեի կանոնադրության 16-րդ կետի 3-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի իրավաբանական բաժնի պետ **Արման Փանոսյանին** նշանակել ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ:

2. Ուժը կորցրած ճանաչել Վիճակագրական կոմիտեի նախագահի 2018 թվականի հունիսի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակելու մասին» թիվ 60-Ա հրամանը:


ՍՏԵՓԱՆ ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

12 հոկտեմբերի 2020 թվական

ք. Երևան